

ՈՒՐԱՆԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱՍ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման պայմաններում նկատվում է ռադիոնուկլիդների խտության ավելացում բնական ջրերում:

Կապված Հայկական ատոմակայանի (ՀԱԿ) վերագործարկման հետ 1996-1998 թթ. Արմավիրի մարզի ջուր-հող-բույս համակարգում կատարվել է ուրանի պարունակության և տեղաբաշխման ուսումնասիրություններ: Զրային նմուշները վերցվել են ըստ ժամկետների Ակնալճի, արտեզյան, Մեծամոր գետի (պոմպակայանից ՀԱԿ մտնող) և ատոմակայանի հետադարձ ջրերից: Համեմատության համար, որպես ստուգիչ նմուշներ են բերվել նաև Դիլիջանի անտառային փորձակայանի (ԴԱՓԿ) ծորակի ջրից:

Պարզվել է, որ ուրանի միջին պարունակությունը բարձր է ատոմակայանի հետադարձ ջրերում՝ 63 γ/L , ցածր՝ արտեզյանում՝ 33 γ/L , Մեծամոր գետի, Ակնալճի և ԴԱՓԿ-ի ծորակի ջրերում, համապատասխանաբար, 45, 50, 15 γ/L :

Նկատվել է Ուրանի պարունակության մեծացում (1,4 անգամ) ՀԱԿ-ի հետադարձ ջրերում: Ուսումնասիրված ջրերում ուրանի պարունակությունը ԴԱՓԿ-ի ծորակի ջրի համեմատ բարձր է 2-4 անգամ:

K.A.Kocharyan, L.M.Kalachyan, M.M.Avetisyan

U CONTENT IN THE WATERS OF ARMAVIR REGION

Summary

U content in the waters of Armavir region has been studied with respect to the reoperation of the Armenian Atomic Power Station. It was shown that among Akna lake, artesian and pump station reactor flowing into and out water the highest u content was recorded in the waters flowing out of the station and the lowest – in the artesian waters. In the waters mentioned above U content is 2-4 times higher compared with the Dilijan orest agrochemical station tap water.